



ԱՐՄԵՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 30510
Օգոստոս 16, 1988

Մեծայարդ
Տիար Արա Տուբորեան
Արլանքա.

Յարգելի Տիար Տուբորեան,

Արլանքայի Եկեղեցական Խորհուրդը, ձեր ատենապետութեամբ, անցնող քանի մը
տարիներու ընթացքին օգտակար աշխատանք տարաւ տեղույն հայերուն հոգեւոր եւ մշակութային
կարիքները հոգալու կապակցութեամբ:

Մեր շնորհակալութիւնը կը յայտնենք ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն՝ ձեր ցուցաբերած
հետաքրքրութեան եւ ձեզի վստահուած պաշտօնի գիտակցութեան համար:

Բարի եղէք մեր գնահատանքը փոխանցնել ձեր գործակիցներուն:

Եկեղեցական Խորհուրդի նոր կազմը, ատենապետութեամբ Տիար Սիմոն Տեփոյեանի,
վստահ ենք որ ձեր օժանդակութիւնը պիտի վայելեն՝ երբ որևէ հարցի կապակցութեամբ դիմում
կատարեն ձեզի:

Կ'աղօթենք որ Տէրը իր հովանին անպակաս ընէ ձեր բոլորին վրայէն եւ ձեզի յաջողութիւն
պարգենէ:

Սիրոյ ողջունի

ԹՈՐԳՈՒՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒ
Առաջնորդ

Օրինակ՝ Տ. Վորքանէս Ա. Քնն. Գալայճեանի